ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

YEREVAN STATE UNIVERSITY
GRADUATE UNION

NON-GOVERNMENTAL ORGANIZATION

ՀՀ, 0025 ք. Երևան, Ալեք Մանուկյան 1,
Հեռ. (37460) 71-00-07

Alex Manoogian St. 1, 0025 Yerevan, RA,
Tel: (37460) 71-00-07

N 060/0618
«22» դեկտեմբեր 2018թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի նախագահ,
«Հետք» թերթի խմբագիր Էդիկ Բաղդասարյանին.

Հարգելի պարոն Բաղդասարյան,

2018թ. հունիսի 20-ին ինձ հասցեագրված Ձեր հարցման կապակցությամբ հայտնում եմ հետևյալը.

«ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող բնակարանային ապահովության սոցիալական ծրագրերի շրջանակում կառուցված բոլոր բազմաբնակարան համալիրներում, շահառուների կենցաղ-սպասարկման պահանջմունքները բավարարելու նպատակով կառուցվել են հասարակական նշանակության օբյեկտներ (հաշվի առնելով կառուցված շենքերի հարակից տարածքներում այդպիսի ենթակառուցվածքների իսպառ բացակայությունը): Դրանք օրենքով սահմանված կարգով վաճառվել են այլ քաղաքացիների և ներկայումս ծառայում են որպես խանութներ, սպասարկման կենտրոններ, հանրային սննդի կազմակերպման օբյեկտներ, մարզասրահներ և գրասենյակներ: Նմանատիպ տարածքներ կառուցվել են «Ավան 1», «Ավան 2», «Ավան 3», «Զեյթուն 1», «Զեյթուն 2» համալիրներում և կառուցվելու են նաև «Զեյթուն 3» համալիրում և «Վերածնունդ» երիտասարդական ավանում:

Մեր կազմակերպության կողմից գնված և կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի 55/17 և 55/20 հասցեներում գտնվող հողամասերում, օրենքով սահմանված կարգով մշակված և հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա կառուցվել է առևտրի և սպասարկման կենտրոն: Կենտրոնը կառուցվել է «Ավան 4» և «Ավան 6» համալիրների բնակիչների (թվով 700 ընտանիքների) կենցաղային պահանջմունքները բավարարելու նպատակով: Նշված կենտրոնին Երևանի քաղաքապետի 2016թ. ապրիլի 8-ի թիվ 1222-Ա որոշմամբ տրամադրվել է Ծարավ Աղբյուրի 55/15 հասցեն: 2016թ. հուլիսի 8-ին Երևանի քաղաքապետի կողմից տրամադրվել է թիվ 01/19-16/41149-277 ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը), որի հիման վրա կառուցված շինության նկատմամբ, օրենքով սահմանված կարգով գրանցվել է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության սեփականության իրավունքը:

2016թ. հոկտեմբերի 13-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի 55/15 հասցեում գտնվող 783.2 քմ. մակերեսով տարածքը վաճառվել է քաղաքացի Ռուզաննա Բեգլարյանին: Ներկայումս այդ տարածքում գործունեություն է ծավալում «Նոր Զովք» խանութների ցանցը:

Հարգանքով՝

«ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ռ. ՔԱՐԱՄՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ
ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY GRADUATE UNION
01547458
Հասարակական կազմակերպություն
Общественная Организация
Non-Governmental Organization
«ՀԿ» «ОБЩЕСТВЕННЫЕ ОРГАНИЗАЦИИ» «NGO»